	240.10			Տապանաքար	1891թ.	-/-	Տ	
	240.11			Տապանաքար	1857թ.	-/-	Տ	
	240.12			Տապանաքար	1871թ.	-/-	Տ	
	240.13			Տապանաքար	19-րդ դ.	-/-	Տ	

240.14		Տապանաքար	1897թ.	-/-	S	
240.15		Տապանաքար	1816թ.	-/-	S	
240.16		Տապանաքար	1816թ.	-/-	S	
240.17		Տապանաքար	1809թ.	-/-	S	
240.18		Տապանաքար	1841թ.	-/-	S	
240.19		Տապանաքար	1881թ.	-/-	S	
240.20		Տապանաքար	1886թ.	-/-	S	
240.21		Տապանաքար	1812թ.	-/-	S	
240.22		Տապանաքար	1872թ.	-/-	S	
240.23		Տապանաքար	1812թ.	-/-	S	
240.24		Տապանաքար	1812թ.	-/-	S	
240.25		Տապանաքար	1854թ.	-/-	S	
240.26		Տապանաքար	1812թ.	-/-	S	
240.27		Տապանաքար	1889թ.	-/-	S	
240.28		Տապանաքար	1819թ.	-/-	S	
240.29		Տապանաքար	1848թ.	-/-	S	
240.30		Տապանաքար	1873թ.	-/-	S	
240.31		Տապանաքար	1893թ.	-/-	S	
240.32		Տապանաքար	1833թ.	-/-	S	
240.33		Տապանաքար	1912թ.	-/-	S	
240.34		Տապանաքար	1912թ.	-/-	S	
240.35		Տապանաքար	1875թ.	-/-	S	
240.36		Տապանաքար	1751թ.	-/-	S	
240.37		Տապանաքար	1898թ.	-/-	S	
240.38		Տապանաքար	1826թ.	-/-	S	
240.39		Տապանաքար	1818թ.	-/-	S	
240.40		Տապանաքար	1901թ.	-/-	S	
240.41		Տապանաքար	1891թ.	-/-	S	
240.42		Տապանաքար	1751թ.	-/-	S	
240.43		Տապանաքար	1819թ.	-/-	S	
240.44		Տապանաքար	1818թ.	-/-	S	
240.45		Տապանաքար	1812թ.	-/-	S	
240.46		Տապանաքար	1751թ.	-/-	S	
240.47		Տապանաքար	1815թ.	-/-	S	
240.48		Տապանաքար	1811թ.	-/-	S	
240.49		Տապանաքար	1849թ.	-/-	S	
240.50		Տապանաքար	1815թ.	-/-	S	
240.51		Տապանաքար	1808թ.	-/-	S	
240.52		Տապանաքար	1810թ.	-/-	S	
240.53		Տապանաքար	1812թ.	-/-	S	
240.54		Տապանաքար	1905թ.	-/-	S	
240.55		Տապանաքար	1908թ.	-/-	S	
240.56		Տապանաքար	1821թ.	-/-	S	

	240.57		Տապանաքար	1830թ.	-/-	S	
	240.58		Տապանաքար	19-րդ դ.	-/-	S	
	240.59		Տապանաքար	1860թ.	-/-	S	
	240.60		Տապանաքար	1848թ.	-/-	S	
241.			Գյուղատեղի	միջնադար	գյուղից 500 մ ար.	S	
242.			Զրադաց /Ակվանց/	1898թ.	գյուղի տարածքում	S	
243.			Զրադաց	19-րդ դ.	գյուղի մեջ	S	
244.			Զրադաց	19-րդ դ.	գյուղից 200 մ ար.	S	
245.			Զրադաց /Համամի/	19-րդ դ.	գյուղից 2 կմ հր.-ամ.	S	
246.			Զրադաց /Ստեփանանց/	19-րդ դ.	գյուղից 800 մ հր.-ամ.	S	
247.			Զրադաց /Աթանեսի/	19-րդ դ.	գյուղի մեջ	S	
248.			Աղբյուր /Օրինաղբյուր/	19-20-րդ դդ.	գյուղի տարածքում	S	
249.			Աղբյուր /Շենին աղբյուր/	1898թ.	գյուղի մեջ	S	
250.			Աղբյուր	19-րդ դ.	գյուղից 250 մ ար.	S	
251.			Աղբյուր	19-րդ դ.	գյուղի մեջ	S	
252.			Աղբյուր	19-20-րդ դդ.	գյուղից 250 մ ար.	S	
253.			Գերեզմանոց	վաղ միջնադար	գյուղից 500 մ ար.	S	
254.			Գերեզմանոց	19-20-րդ դդ.	գյուղի մեջ	S	
255.			Գերեզմանոց	18-19-րդ դդ.	գյուղից 50 մ հս.-ար.	S	
	255.1		Ժայռաբեկոր-տապանաքար	1882թ.	-/-	S	
	255.2		Տապանաքար	1923թ.	-/-	S	
	255.3		Տապանաքար	1819թ.	-/-	S	
	255.4		Տապանաքար	1871թ.	-/-	S	
	255.5		Տապանաքար	20-րդ դարի սկիզբ	-/-	S	
	255.6		Տապանաքար	1818թ.	-/-	S	
	255.7		Տապանաքար	1908թ.	-/-	S	
	255.8		Տապանաքար	1751թ.	-/-	S	
	255.9		Տապանաքար	1812թ.	-/-	S	
	255.10		Տապանաքար	1811թ.	-/-	S	
	255.11		Տապանաքար	1845թ.	-/-	S	
	255.12		Տապանաքար	1751թ.	-/-	S	
256.			Հուշատախտակ	1968թ.	գյուղի մեջ	S	
257.			Սրբատեղի	միջնադար	գյուղից 2 կմ հր.-ամ.	S	
258.			Խաչքար	11-12-րդ դդ.	գյուղից 2 կմ հր.-ամ.	S	
259.			Խաչքար	1993թ.	գյուղի մեջ	S	
260.			Խաչքար	2003թ.	գյուղից 2 կմ հս.-ամ.	S	
261.			Խաչքար	2000թ.	գյուղի մեջ	S	
262.			Տապանաքար	1918թ.	գյուղի մեջ	S	
263.			Տապանաքար	1936թ.	գյուղի մեջ	S	
264.			Խաչքար /Պուլուր արտին/	11-12-րդ դդ.	գյուղից 500 մ ար.	S	
265.			ՀՄՊԶ հուշարձան	1975թ.	գյուղի մեջ	S	

266.			ԱՊԶ հուշարձան	2006թ.	գյուղի մեջ	S	
Ընդամենը՝ 103 հուշարձան							
Ընդհանուրը՝ 576 հուշարձան							

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**«ՏՅԱՔ» ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ
ՍՏԵՂՇԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» ենթակետի և 17-րդ հոդվածի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Տյաք գյուղում ստեղծել «Տյաք» պետական պատմամշակութային արգելոց (5,62 հեկտար):

2. Հաստատել՝

1) «Տյաք» պետական պատմամշակութային արգելոցի սահմանները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Տյաք» պետական պատմամշակութային արգելոցի կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել, որ մինչև արգելոցի կառավարման մարմնի կազմավորումը, արգելոցի կանոնադրությամբ նրան վերապահված գործառնություններն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 1-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել «Տյաք» պետական պատմամշակութային արգելոցի գործունեության և զարգացման հեռանկարային ծրագիր:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի վարչակազմի ղեկավարի հետ համատեղ մինչև 2017 թվականի նոյեմբերի 20-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել սույն որոշումից բխող առաջարկություններ՝

1) հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների.

2) ըստ անհրաժեշտության ֆիզիկական և իրավաբանական անձանց հողամասերը պետության կարիքների համար օտարելու.

3) հողատարածքներում հողօգտագործման սահմանափակումներ և սերվիտուտներ սահմանելու վերաբերյալ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՏՅԱՔ» ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Տյաք» պետական պատմամշակութային արգելոցը (այսուհետ՝ արգելոց) ստեղծվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 14-ի N 155-Ն որոշմամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, տարածքի պատմամշակութային ու բնապատմական, նյութական և հոգևոր արժեքներն իրենց պատմական, մշակութային ու բնական միջավայրում ամբողջական պահպանման, վերականգնման, ուսումնասիրման և հրապարակային ներկայացման համար՝ գիտահետազոտական, մշակութայնության ակադեմիական և զբոսաշրջային-էքսկուրսիոն նպատակներով: Այն ստեղծվում է «Տյաք» հուշարձանախմբի հատուկ ուսումնասիրման և պահպանական պայմանակարգի (ռեժիմի) սահմանման անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչը հնարավորություն կտա նաև ապահովել հուշարձանախմբի հնարավորինս անաղարտ պահպանությունը և դրա նպատակային օգտագործումը: Արգելոցը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Տյաք գյուղի վարչական տարածքում:

2. Արգելոցի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Տյաք» պետական պատմամշակութային արգելոց
հայերեն կրճատ՝ «Տյաք» պետական արգելոց
ռուսերեն՝ Историко-культурный государственный заповедник “Тяк”,
ռուսերեն կրճատ՝ Государственный заповедник “Тяк”,
անգլերեն լրիվ՝ State historical and cultural reservation “Tyaq”,
անգլերեն կրճատ՝ State reservation “Tyaq”:

II. ԱՐԳԵԼՈՑԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Արգելոցի ստեղծման նպատակներն են՝

- 1) հուշարձանի պատմամշակութային հողերի և դրանց հարող տեղանքապատկերների (լանդշաֆտների) հնարավորինս անաղարտ պահպանումը.
- 2) «Տյաք» հնագիտական հուշարձանից հայտնաբերված և այդ հուշարձանին վերաբերող մշակութային արժեքների պահպանումը, ուսումնասիրումը, ինչպես նաև նպատակային օգտագործումը.
- 3) գիտաճանաչողական զբոսաշրջության զարգացման նախադրյալների ստեղծումը և բնակչության մշակութային ժառանգության նկատմամբ հարգանքի ձևավորումը:

4. Արգելոցի տարածքում իրականացվող գործունեության հիմնական ուղղություններն են.

- 1) **գիտաֆոնդային.** թանգարանային, արխիվային և գրադարանային ֆոնդերի գիտական կոմպլեկտավորում, հավաքածուների պահպանության և պետական հաշվառման կազմակերպում, դրանց գույքագրում, թանգարանային համալիրների ուսումնասիրություն և համակարգում.
- 2) **գիտահետազոտական.** թանգարանային հավաքածուների, պատմական, ճարտարապետական և բնական հուշարձանների ուսումնասիրություն և համակարգում, ցուցադրանմուշային և ցուցահանդեսային ծրագրերի մշակում, սեմինարների, խորհրդակցությունների, կոնֆերանսների անցկացում.
- 3) **էքսպոզիցիոն-ցուցահանդեսային.** էքսպոզիցիաների և ցուցահանդեսների նախագծում, դրանց մոնտաժում և ապամոնտաժում, էքսպոզիցիաների պահպանության ապահովում.
- 4) **վերականգնողական-կոնսերվացիոն.** հավաքածուների, մշակութային և ճարտարապետական հուշարձանների վերականգնման և կոնսերվացման ապահովում.
- 5) **լուսավորչական և էքսկուրսա-զբոսաշրջային.** էքսկուրսիաների անցկացման, էքսկուրսա-զբոսաշրջային ծրագրերի իրագործման, զանգվածային միջոցառումների կազմակերպման միջոցով պատմության, մշակույթի և բնական հուշարձանների հանրամատչելիացում, ժողովրդական մշակութային ավանդույթների տնտեսավարման և բնօգտագործման ավանդական ձևերի ուսումնասիրություն, աջակցություն և վերածնում.

6) **խմբագրահրատարակչական և գովազդային.** գիտահետազոտական գործունեության արդյունքների, ժողովածուների, գիտական և ցուցահանդեսային պաստառների, գովազդների հրատարակման նախապատրաստություն, տեսաֆիլմերի ստեղծում, հեռահաղորդակցական համակարգերի կիրառում.

7) **տնտեսական.** տնտեսական գործունեության վարում, առաջադրված խնդիրների իրականացում.

8) **միջազգային.** միջազգային մշակութային կապերի իրականացում, թանգարանային զբոսաշրջության կազմակերպում և զարգացում.

9) **պահպանական.** թանգարան-արգելոցի տարածքի, ֆոնդերի, պատմամշակութային հուշարձանների անվտանգության միասնական համակարգի ստեղծում:

III. ԱՐԳԵԼՈՑԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ (ՌԵԺԻՄԸ)

5. Արգելոցի տարածքում արգելվում է՝

1) տնտեսական և բնակելի օբյեկտների շինարարությունն ու շահագործումը, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների շինարարությունը՝ բացառությամբ արգելոցի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների շինարարության.

2) մեքենայացված տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը՝ թույլատրված ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.

3) երկրաբանահետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվում են փորձնական հանույթներով, մակաբացումներով, պայթեցումներով և բնապատմական միջավայրը խախտող այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ.

4) օգտակար հանածոների մշակումը, հանքաշերտերի, հանքաէլուտների և լեռնատեսակների ելքերի շահագործումը.

5) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում, աղճատում, նսեմացնում է արգելոցի պայմանակարգը, հնագիտական հուշարձանները կամ սպառնում գիտական և (կամ) մշակութային արժեքի պահպանությանը:

IV. ԱՐԳԵԼՈՑԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6. Արգելոցի պահպանությունը, ուսումնասիրությունը, օգտագործումը և հանրահռչակումն իրականացնում է «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

7. Արգելոցի տարածքում գտնվող հուշարձաններին և դրանց բնապատմական միջավայրին առնչվող աշխատանքները համաձայնեցվում են պետական լիազոր մարմնի հետ:

ԼԵՈՒՍՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԻՔԻԵՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ԱՌԱՆՁՆԱԿԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Սննդամթերքի անվտանգության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***:

1. Հաստատել ձկնորսության արտադրանքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՁԿՆՈՐՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՀԻԳԻԵՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ԱՌԱՆՁՆԱԿԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ**

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Ձկնորսության արտադրանքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ կանոնակարգ) նպատակը սննդի շղթայի օպերատորների համար ձկնորսության արտադրանքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների սահմանումն է՝ ի լրումն սննդամթերքի հիգիենային ներկայացվող ընդհանուր պահանջների:

2. Ձկնորսության արտադրանքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջները տարածվում են սննդի շղթայի բոլոր փուլերի վրա: Ներմուծվող ձկնորսության արտադրանքը պետք է համապատասխանի սույն կանոնակարգով կամ արտահանող երկրի համարժեք փաստաթղթով սահմանված պահանջներին:

3. Ձկնորսության արտադրանքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջները չեն տարածվում՝

1) շուկայահանվող կենդանի երկփեղկ փափկամարմինների, կենդանի փշամորթերի, կենդանի թաղանթավորների և կենդանի ծովային փորոտանի փափկամարմինների վրա:

2) բուսական ծագման և վերամշակված ձկնորսության արտադրանքի խառը բաղադրությամբ սննդամթերքի վրա, չնայած, որ այդ արտադրությունում օգտագործվող ձկնորսության արտադրանքը նույնպես պետք է արտադրված և վերամշակված լինի սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:

3) անձնական կամ ընտանեկան սպառման համար նախատեսված նախնական արտադրության արտադրանքի վրա:

4) անձնական կամ ընտանեկան սպառման համար նախատեսված ձկնորսության արտադրանքի տնային պայմաններում պատրաստման, վերամշակման, օգտագործման կամ պահման վրա:

4. Ձկնորսության արտադրանքի նախնական արտադրությունը ներառում է՝

1) շուկայահանման նպատակով ձկնորսության արտադրանքի բուծումը և որսը:

2) որսից հետո ձկնորսության արտադրանքի փոխադրումը մինչև մշակող կազմակերպություն և դրա պահումը:

3) որսի վայրից կամ մշակող կազմակերպությունից ձկնորսության արտադրանքի տեղափոխումը մինչև վերամշակող կազմակերպություն:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **երկփեղկ փափկամարմին**՝ ջրից միկրոօրգանիզմները ֆիլտրելու միջոցով սնվող փափկամարմին:

2) **ձկնորսության արտադրանք**՝ ծովային և քաղցրահամ ջրերի վայրի կամ մարդու կողմից բուծված բոլոր կենդանիները (բացառությամբ կենդանի երկփեղկ փափկամարմինների, կենդանի փշամորթերի, կենդանի թաղանթավորների և կենդանի ծովային փորոտանի փափկամարմինների, ինչպես նաև բոլոր կաթնասունների, սողունների և գորտերի)՝ ներառյալ դրանց բոլոր ուտելի տարատեսակները, մասերը, ինչպես նաև դրանցից ստացված ուտելի արտադրանքը:

3) **ձկնորսության թարմ արտադրանք**՝ ամբողջական կամ մշակված՝ ներառյալ վակուում փաթեթավորմամբ կամ կարգավորվող մթնոլորտի պայմաններում փաթեթավորված այն ձկնորսության արտադրանքը, որը, փչացումը կանխելու նպատակով, բացի պաղեցումից, չի ենթարկվել որևէ մշակման:

4) **միսը ոսկորից մեխանիկական եղանակով առանձնացումից ստացված ձկնորսության արտադրանք**՝ միսը ոսկորից մեխանիկական միջոցներով առանձնացնելու եղանակով ստացված ցանկացած արտադրանք, որի արդյունքում միսը կորցնում կամ ձևափոխում է իր նախնական կառուցվածքը:

5) **պաղեցում**՝ գործընթաց, երբ ձկնորսության արտադրանքը հասցվում է սառույցի հալմանը մոտ ջերմաստիճանի:

**III. ՁԿՆՈՐՄՈՒԹՅԱՆ ԹԱՐՄ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՈՐՄԻՑ ՄԻՆԶԵՎ ՑԱՄԱՔ
ՓՈՒՍԱՐՄԱՆԸ ԵՎ ԻՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

6. Ձկնորսության թարմ արտադրանքի՝ որսից մինչև ցամաք փոխադրման գործընթացում անհրաժեշտ է՝

1) ապահովել բարձր, փոխադրման և բեռնաթափման ընթացքում սննդի հետ շփման համար թույլատրված հեշտ մաքրման և ախտահանման ենթարկվող նյութերից պատրաստված սարքավորումների օգտագործումը և նորոգ ու մաքուր վիճակում պահպանումը.

2) բացառել բարձր, փոխադրման և բեռնաթափման ընթացքում ձկնորսության արտադրանքի աղտոտումը, մասնավորապես, ապահովել՝

ա. բարձր, փոխադրման և բեռնաթափման գործընթացների արագ իրականացումը,

բ. բարձր, փոխադրման և բեռնաթափման ընթացքում ձկնորսության թարմ արտադրանքի արևի ճառագայթների և ջերմության այլ աղբյուրների ազդեցությունից պաշտպանվածությունը,

գ. ձկնորսության թարմ արտադրանքի՝ միայն խմելու կամ մաքուր ջրով լվացումը,

դ. ձկնորսության թարմ արտադրանքի պաղեցման կամ պահման համար միայն խմելու կամ մաքուր ջրից ստացված սառույցի օգտագործումը,

ե. ձկնորսության թարմ արտադրանքի պահման համար անհրաժեշտ համապատասխան պայմաններով ջերմային միջավայրի ապահովվածությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ սառույցի վրա անհապաղ տեղավորումը,

զ. ձկնորսության թարմ արտադրանքի ուտելի մասերի անցանկալի վնասվածքներ առաջացնող սարքավորումների և միջոցների օգտագործման բացառումը:

7. Ձկնորսության թարմ արտադրանքի մեծածախ առևտրի, աճուրդների, ցուցադրման և պահման գործընթացներում անհրաժեշտ է՝

1) ապահովել այդ նպատակով նախատեսված տարածքներում ժամանակավոր և սննդում օգտագործելու համար ոչ պիտանի ձկնորսության արտադրանքի առանձնացված պահման համար անհրաժեշտ սառնարանային փակվող տարածքների առկայությունը.

2) ապահովել ձկնորսության արտադրանքի վաճառքի համար ցուցադրման կամ դրանց պահման տարածքների՝

ա. այլ նպատակներով օգտագործման բացառումը,

բ. արտանետվող գազեր արձակող փոխադրամիջոցների, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ արտադրանքի որակի վրա, մուտքի բացառումը,

գ. կենդանիների մուտքի բացառումը,

դ. բավարար լուսավորվածությունը:

8. Ձկնորսության թարմ արտադրանքը՝ բացառությամբ կենդանի վիճակում պահման համար նախատեսվածների, բեռնաթափումից անմիջապես հետո պետք է պաղեցվի և պահվի սառույցի հալման ջերմաստիճանին մոտ ջերմաստիճանում:

IV. ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԹԱՐՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

9. Մշակման կազմակերպություն մուտք եղած ձկնորսության թարմ արտադրանքին ներկայացվող պահանջներն են՝

1) անմիջապես չմշակվող կամ չվերամշակվող կամ չառաքվող չփաթեթավորված ձկնորսության թարմ արտադրանքի համապատասխան տարածքներում՝ սառույցի մեջ՝ սառույցի շերտի սահմանված հաճախականությամբ ավելացմամբ պահումը.

2) անմիջապես չմշակվող փաթեթավորված ձկնորսության թարմ արտադրանքի սառույցի հալման ջերմաստիճանին մոտ ջերմաստիճանում պահումը.

3) մշակման գործողությունների հիգիենիկ պատշաճ պայմաններում իրականացումը: Տեխնիկական և արտադրական հնարավորությունների առկայության դեպքում որսից և (կամ) բեռնաթափումից անմիջապես հետո՝ կարճ ժամանակահատվածում փորոտիքի հեռացման ապահովումը.

4) գլխատումից և փորոտիքի հեռացումից անմիջապես հետո ձկնորսության արտադրանքի մանրակրկիտ լվացումը խմելու կամ մաքուր ջրով.

5) մշակման ընթացքում առանձնացվող ներքին օրգանների և մարդու առողջության համար վտանգավոր այլ մասերի անհապաղ հեռացումը սննդի համար նախատեսված ձկնորսության արտադրանքից և դրանց առանձին պահումը.

6) ձկնորսության արտադրանքից առանձնացվող մարդու սննդի համար նախատեսված մթերքի և ենթամթերքի (ձկնկիթ, լյարդ կամ այլն) սառեցումը կամ սառույցի մեջ՝ սառույցի հալման աստիճանին մոտ ջերմաստիճանում պահումը.

7) ձկնորսության արտադրանքի կտրատման և ֆիլեի անջատման գործընթացների՝ դրանց աղտոտումը կամ ֆիլեի ու ձկան կտորների փչացումը կանխարգելող

պայմաններում իրականացումը, իսկ կտրատումից և ֆիլեի անջատումից հետո, կարճ ժամանակահատվածում դրանց փաթեթավորումը և պաղեցումը.

8) չփաթեթավորված մշակված սառույցի մեջ պահվող ձկնորսության թարմ արտադրանքի տեղափոխման կամ պահման համար օգտագործվող բեռնարկղերից սառույցի հալումից առաջացող ջրի հոսքի ապահովումը:

10. Թույլատրվում է չկտրատված, փորոտիքը հեռացրած ձկնորսության արտադրանքը պահել և մինչև հետագա մշակող կամ վերամշակման կազմակերպություն տեղափոխել սառը ջրում:

11. Պահածոյացման նպատակով նախատեսված մշակման չենթարկված ձուկն աղաջրում սառեցնելու դեպքում մթերքի ջերմաստիճանը պետք է հասցվի Յելսիուսի մինչև -9 կամ ավելի ցածր աստիճանի, իսկ աղաջուրը չպետք է հանդիսանա ձկան աղտոտման աղբյուր:

12. Ձկնորսության թարմ արտադրանքի սառեցման կազմակերպությանը ներկայացվող պահանջներն են՝

1) կազմակերպությունը պետք է ունենա՝

ա. անհրաժեշտ հզորության սառնարանային սարքավորումներ, որոնք ապահովում են մթերքի ներսի ջերմաստիճանի արագ իջեցումը Յելսիուսի -18 և ավելի ցածր աստիճանի,

բ. ձկնորսության սառեցված արտադրանքի պահման համար անհրաժեշտ Յելսիուսի -18 և ավելի ցածր աստիճան ապահովող սառցախցիկներ.

2) սառցախցիկները պետք է կահավորված լինեն ջերմաստիճանը գրանցող սարքերով՝ տեղակայված սառցախցիկի ամենաբարձր ջերմաստիճանային գոտում, այնպես, որ դրանց ցուցմունքը լինի տեսանելի.

3) սառցախցիկները պետք է լինեն բավարար հերմետիկ՝ դրանցում պահվող մթերքի աղտոտումը բացառելու նպատակով.

4) սառցախցիկները և բեռնարկղերը, որոնցում պահվում է ձկնորսության արտադրանքը, պետք է ապահովեն արտադրանքի պահումը հիգիենիկ պատշաճ պայմաններում և, անհրաժեշտության դեպքում, նախագծված և պատրաստված լինեն այնպես, որ ձկնորսության արտադրանքը չշփվի սառույցի հալումից առաջացող ջրի հետ:

13. Միսը ոսկորից մեխանիկական եղանակով առանձնացումից ստացված ձկնորսության արտադրանքի արտադրությանը ներկայացվող պահանջներն են՝

1) օգտագործվող հումքը պետք է բավարարի հետևյալ պահանջները՝

ա. միայն ամբողջական ձուկը և ոսկորներից անջատված ֆիլեն կարող են օգտագործվել միսը ոսկորից մեխանիկական եղանակով առանձնացումից ստացվող ձկնորսության արտադրանքի արտադրության համար,

բ. օգտագործվող հումքը չպետք է պարունակի ձկան ներքին օրգանների մնացորդներ.

2) արտադրական գործընթացը պետք է բավարարի հետևյալ պահանջները՝

ա. մեխանիկական եղանակով առանձնացումը պետք է կատարվի ֆիլեի անջատումից անմիջապես հետո,

բ. ամբողջական ձուկ օգտագործելու դեպքում այն պետք է նախապես փորոտիքից մաքրված և լվացված լինի,

գ. մեխանիկական եղանակով առանձնացումից ստացված ձկնորսության արտադրանքն այնուհետև կարճ ժամկետում պետք է սառեցվի կամ, որպես բաղադրիչ, խառնվի սառեցման համար նախատեսված այլ արտադրանքին կամ պահվի թույլատրելի այլ եղանակով:

14. Մակաբույծներից պաշտպանվելու նպատակով՝

1) սույն ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում նշված հումքի կամ վերամշակված ձկնորսության արտադրանքի բոլոր մասերը պետք է 24 ժամից ոչ պակաս ժամանակահատվածում սառեցվեն Յելսիուսի -20 կամ ավելի ցածր աստիճանի ջերմաստիճանում՝

ա. հում կամ կիսահում վիճակում վիճակում օգտագործվող ձկնորսության արտադրանքը,

բ. ծովատառեխ, թյունիկ (սկումբրիա), ծովային մանրաձուկ (շաբրոտ) և մարդու կողմից չվերահսկվող պայմաններում ապրող ատլանտյան ու խաղաղօվկիանոսյան սաղմոն ցեղի այն ձկներից ստացված արտադրանքը, որոնք ենթարկվել են սառը ապխտման, և ապխտման ամբողջ ժամանակահատվածում, ձկնորսության արտադրանքի ներքին ջերմաստիճանը կազմել է Յելսիուսի +60 աստիճանից ոչ ավելի,

գ. ձկնորսության մարինացված և (կամ) աղադրված արտադրանքը, եթե ընտրված մշակումը բավարար չէ ոչնչացնելու կլոր որդերի (nematode) թրթուրները.

2) սննդի շղթայի օպերատորները սույն կետի 1-ին ենթակետում նշված մշակումները կարող են չկիրառել միայն այն դեպքերում, երբ՝

ա. առկա են հավաստի համաճարակաբանական տվյալներ, որ տվյալ ձկնատեսակների ծագման ձկնորսության շրջանները մակաբույծների առկայության առումով առողջության համար վտանգ չեն ներկայացնում,

բ. դա թույլատրված է պետական կառավարման լիազոր մարմնի կողմից.

3) սույն կետի 1-ին ենթակետում նշված մշակումների ենթարկված շուկայահանվող ձկնորսության արտադրանքն ուղեկցող փաստաթուղթը պետք է պարունակի համապատասխան նշում՝ մշակման եղանակի մասին:

**V. ԽԵՑԳԵՏՆԱԿԵՐՊԵՐԻ ԵՎ ՓՈՓԿԱՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՓՄԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

15. Սննդի շղթայի այն օպերատորները, որոնք իրականացնում են խեցգետնակերպերի և փափկամարմինների եփումը, պետք է ապահովեն հետևյալ պահանջները՝

1) եփման նպատակով պետք է օգտագործվի խմելու կամ մաքուր ջուր.

2) խեցգետնակերպերը և փափկամարմինները եփվելուց անմիջապես հետո պետք է արագ պաղեցվեն.

3) եթե չի կիրառվում պահածոյացման այլ եղանակ, ապա պաղեցումը պետք է շարունակել մինչև սառույցի հալման աստիճանին մոտ ջերմաստիճանին հասցնելը.

4) աղտոտումից խուսափելու նպատակով կեղևահանումը և խեցազատումը պետք է իրականացվեն հիգիենիկ պատշաճ պայմաններում, իսկ եթե այդ գործընթացները կատարվում են ձեռքով, պետք է առանձնակի ուշադրություն ցուցաբերվի աշխատողների ձեռքերի մաքրությանը.

5) եփված խեցգետնակերպերն ու փափկամարմինները կեղևահանումից ու խեցազատումից անմիջապես հետո, կարճ ժամկետում, պետք է պաղեցվեն կամ սառեցվեն մինչև VIII բաժնում նշված ջերմաստիճանը:

**VI. ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ**

16. Սննդի շղթայի ձկնորսության արտադրանքի իրացման գործընթացում ներգրավված օպերատորները պետք է ապահովեն, որ շուկայահանվող ձկնորսության արտադրանքը բավարարի ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մանրէաբանական չափանիշներին, այնպես էլ հետևյալ հիգիենիկ նորմերին՝

1) պետք է հետազոտվեն ձկնորսության արտադրանքի զգայորոշման ցուցանիշները, որպեսզի, մասնավորապես, ապահովեն ձկնորսության արտադրանքի թարմությունը բնութագրող չափանիշները.

2) հիստամինի պարունակությունը չպետք է գերազանցի թույլատրելի առավելագույն քանակությունը.

3) պետք է բացառվի ձկնորսության չմշակված արտադրանքի շուկայահանումը, եթե քիմիական հետազոտություններով պարզվել է, որ ցնդող (ազատ) ազոտի ընդհանուր պարունակությունը գերազանցում է SՎԲ-Ն-ի (TVB-N) կամ ՏՄԱ-Ն-ի (TMA-N) համար սահմանված թույլատրելի առավելագույն քանակությունները.

4) ձկնորսության արտադրանքը պետք է ենթարկվի տեսողական հետազոտության, որպեսզի հայտնաբերվեն տեսանելի մակաբույծները և բացառվի մակաբույծներով վարակված ձկնորսության արտադրանքի շուկայահանումը.

5) պետք է բացառվի մարդու առողջության համար վտանգավոր թունավոր նյութեր պարունակող ձկնորսության արտադրանքի շուկայահանումը, մասնավորապես՝

ա. տետրադոնտիդ (Tetraodontidae), մոլիդ (Molidae), դիոդոնտիդ (Diodontidae) և կանտիգաստերիդ (Canthigasteridae) դասերի թունավոր ձկներից ստացված,

բ. սիգուատոքսին (ciguatotoxin) կամ մկանները կաթվածահարող կենսաթույն պարունակող ձկնորսության արտադրանքը՝ բացառությամբ երկփեղկ փափկամարմիններից, փշամորթերից, թաղանթավորներից և ծովային փորոտանի փափկամարմիններից ստացված ձկնորսության արտադրանքի, եթե արտադրվել են դրանց արտադրությանը ներկայացվող պահանջներով, և կենսաթույնի պարունակությունը չի գերազանցում աղյուսակում նշված առավելագույն չափաքանակները:

Աղյուսակ

Ծովային կենսաթույնի անվանումը	Չափի միավորը	Թույլատրելի առավելագույն չափաքանակը
Փափկամարմինների կաթվածահարող կենսաթույն (paralytic shellfish poison (PSP))	մգ/կգ	800

Փափկամարմինների հիշողության կորուստ պատճառող կենսաթույն (amnesic shellfish poison (ASP))	մգ/կգ, արտահայտված դոմոիկ (domoic) թթվով	20
Օկադաիկ (okadaic acid) թթու, դինոֆիզիստոքսինների (dinophysistoxins) և պեկտենոտոքսինների (pectenotoxins) ընդհանուր քանակությունը	մկգ/կգ, օկադաիկ թթվին համարժեք	160
Եսսոտոքսիններ (yessotoxins)	մգ/կգ, էսսոտոքսինին համարժեք	1
Ազասպիրաթթուներ (azaspiracids)	մկգ/կգ, ազասպիրաթթվին համարժեք	160

**VII. ՁԿՆՈՐՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

17. Բեռնարկղերը, որոնցում ձկնորսության թարմ արտադրանքը պահվում է սառույցի մեջ, պետք է լինեն անջրանցիկ և ապահովեն սառույցի հալումից առաջացող ջրի հոսքը:

18. Ձկնորսության արտադրանքի պաղեցման համար նախատեսված սառույցը պետք է պահվի դրա աղտոտումը բացառող պայմաններում:

19. Պետք է ապահովել, որ ձկնորսության արտադրանքը փաթեթավորող նյութերը՝

- 1) չհանդիսանան աղտոտման աղբյուր.
- 2) պահվեն այնպես, որ բացառվի աղտոտման վտանգը.
- 3) բազմակի օգտագործման նախատեսված լինելու դեպքում՝ հեշտությամբ լվացվեն և անհրաժեշտության դեպքում ախտահանվեն:

**VIII. ՁԿՆՈՐՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՊԱՀՄԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

20. Ձկնորսության թարմ, հալեցված-չմշակված և խեցգետնակերպերի ու փափկամարմինների եփված-պաղեցված արտադրանքը պետք է պահվի սառույցի հալման աստիճանին մոտ ջերմաստիճանում:

21. Ձկնորսության սառեցված արտադրանքը պետք է պահվի Յելսիուսի մինչև -18 և ավելի ցածր ջերմաստիճանում, իսկ աղաջրում պահվող, պահածոների արտադրության համար նախատեսված սառեցված ամբողջական ձուկը՝ Յելսիուսի մինչև -9 և ավելի ցածր ջերմաստիճանում:

22. Ձկնորսության կենդանի արտադրանքը պետք է պահվի սննդամթերքի անվտանգությունը և կենսունակությունն ապահովող ջերմաստիճանում և պայմաններում:

**IX. ՁԿՆՈՐՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱՊՐՄԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

23. Ձկնորսության արտադրանքի փոխադրման ժամանակ պետք է ապահովվի պահանջվող ջերմաստիճանը, մասնավորապես՝

1) ձկնորսության թարմ, հալեցված-չմշակված և խեցգետնակերպերի ու փափկամարմինների եփված-սառեցված արտադրանքը պետք է պահվի սառույցի հալման աստիճանին մոտ ջերմաստիճանում.

2) ձկնորսության սառեցված արտադրանքը՝ բացառությամբ աղաջրում պահվող, պահածոների արտադրության համար նախատեսված սառեցված ամբողջական ձկների, փոխադրման ամբողջ ընթացքում արտադրանքի բոլոր մասերը պետք է պահվեն Յելսիուսի մինչև -18 և ավելի ցածր հաստատուն ջերմաստիճանում, իսկ ջերմաստիճանի հնարավոր կարճաժամկետ շեղումը չպետք է գերազանցի Յելսիուսի +3 աստիճանը:

24. Մույն կանոնակարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները կարող են չապահովվել, եթե ձկնորսության սառեցված արտադրանքը փոխադրվում է հալեցման համար նախատեսված սննդի կազմակերպություն՝ հետագա մշակման և (կամ) վերամշակման նպատակով, եթե երթուղին կարճ է, և դրա համար կա պետական կառավարման լիազոր մարմնի թույլտվությունը:

25. Ձկնորսության արտադրանքը սառույցի մեջ փոխադրելու դեպքում սառույցի հալումից առաջացող ջուրը չպետք է շփվի ձկնորսության արտադրանքի հետ:

26. Շուկայահանվող ձկնորսության կենդանի արտադրանքը պետք է փոխադրվի սննդամթերքի անվտանգությունը և կենսունակությունն ապահովող պայմաններում:

**ԼԵՈՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածին
համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավա-
րությունը **ն ր ո շ ու մ է**:

1. Հաստատել զորահավաքային մարմինների օրինակելի կանոնադրու-
թյունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Զորահավաքային մարմինների օրինակելի կանոնադրության (այսուհետև՝ կանոնադրություն) նպատակն է սահմանել այդ մարմինների իրավունքներն ու պարտականությունները, ենթակայությունը, խնդիրները և դրանց լուծման հիմնական ուղղությունները:

2. Զորահավաքային մարմիններն ստեղծվում են պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում ու զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններում:

Պետական մարմիններում զորահավաքային մարմինների իրավասություններն իրականացնում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները:

3. Զորահավաքային մարմիններն իրենց աշխատանքի ընթացքում ղեկավարվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ու անմիջական ղեկավարի որոշումներով, որի վրա անհատական պատասխանատվություն է դրված զորահավաքային նախապատրաստության միջոցառումների կազմակերպման և իրականացման համար:

II. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ

ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ

4. Զորահավաքային մարմինների հիմնական խնդիրներն են խաղաղ ժամանակ զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:

5. Զորահավաքային նախապատրաստության խնդիրներին համապատասխան՝

1) պետական մարմիններում ստեղծվող զորահավաքային մարմինները տվյալ բնագավառի զորահավաքային նախապատրաստության մասով իրականացնում են՝

ա. զորահավաքային նախապատրաստության համակարգի ղեկավարումը,

բ. զորահավաքային նախապատրաստության ծրագրերի, պլանների մշակման աշխատանքների գիտամեթոդական, տեղեկատվական, մեթոդական և կազմակերպչական ապահովումը,

գ. զորահավաքային նախապատրաստության մասով՝ պետական պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստումը,

դ. զորահավաքային առաջադրանքների կատարումն ապահովող միջոցառումների մշակումը և անհրաժեշտության դեպքում՝ դրանց իրականացումը,

ե. զորահավաքային նախապատրաստության միջոցառումների կատարման վերաբերյալ պետական մարմնի ղեկավարին հաշվետվություն ներկայացնելը,

զ. զորահավաքային պլանների կատարման և զորահավաքային ծավալման ուսումնական վարժանքների անցկացման կազմակերպումն ու իրականացումը,

է. սահմանված կարգով պետական մարմնի զինապարտների հաշվառումը,

ը. սպառազինության և տեխնիկայի, կարևորագույն քաղաքացիական արտադրանքների, բնակչության կենսապահովման համակարգերի, առավելագույն վտանգ ու ազգային արժեքներ ներկայացնող օբյեկտների փաստաթղթերի ապահովագրական ֆոնդի ստեղծումը,

թ. զորահավաքային առաջադրանքների (պատվերների) կատարման և խնդիրների իրագործման ժամանակ, զորահավաքային պլանների համաձայն, կազմակերպություններից կամ քաղաքացիներից շենքեր, շինություններ, հողամասեր, գույք, տրանսպորտային և այլ նյութական միջոցներ վերցնելու, ինչպես նաև նրանց տնտեսական գործունեության ուղղվածությունը փոփոխելու ժամանակ համապատասխան ակտերի կազմումը.

2) տեղական ինքնակառավարման մարմիններում և զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններում ստեղծվող զորահավաքային մարմինները զորահավաքային նախապատրաստության մասով իրականացնում են՝

ա. սահմանված գորահավաքային առաջադրանքի կատարումն ապահովող գորահավաքային պլանի մշակման աշխատանքի կազմակերպումը,

բ. գորահավաքային պլանների կատարումն ապահովող միջոցառումների մշակումը և իրականացումը,

գ. գորահավաքային նախապատրաստության մասով պաշտպանական պատվերի (առաջադրանքը), ինչպես նաև համապատասխան պայմանագրերի կատարումն ապահովող միջոցառումների մշակումը,

դ. սահմանված կարգով կազմակերպության ղեկավար անձնակազմի, մասնագետների և որակյալ բանվորների ամրագրման աշխատանքների իրականացումը,

ե. գորահավաքային նախապատրաստական միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը,

զ. գորահավաքային նախապատրաստության ոլորտին առնչվող այլ աշխատանքներ:

6. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում գորահավաքային մարմինները, համագործակցելով քաղաքացիական պաշտպանության ոլորտի լիազոր մարմնի հետ, իրականացնում են հետևյալ գործառնությունները՝

1) քաղաքացիական պաշտպանության պլանների մշակում ու մասնակցություն դրանց մշակման աշխատանքներին.

2) համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ քաղաքացիական պաշտպանության զարգացման և այդ նպատակի համար ներդրումների, նյութատեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ առաջարկությունների մշակում.

3) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման կազմակերպում.

4) կառուցվածքային ստորաբաժանումների կողմից քաղաքացիական պաշտպանության գծով պարտականությունների կատարման նկատմամբ հսկողություն.

5) կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատողների կողմից իրականացվող քաղաքացիական պաշտպանության ոլորտի աշխատանքների համակարգում.

6) ղեկավար կազմի հանձնարարությամբ՝ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների՝ քաղաքացիական պաշտպանության գծով գործունեության ուսումնասիրություններին մասնակցություն.

7) սահմանված կարգով քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների վերլուծություն և դրա արդյունքները ղեկավարին ներկայացնելը.

8) իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև մարմնի ղեկավարի հանձնարարությամբ, առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստում.

9) կառուցվածքային, տարածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատողներին մասնագիտական հարցերի վերաբերյալ խորհրդատվական օգնության ցուցաբերում.

10) քաղաքացիական պաշտպանության հարցերով անձնակազմի նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում և դրանք ներկայացնելը.

11) քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերվող այլ հարցերի համակարգում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում:

7. Զորահավաքային մարմիններն իրավունք ունեն՝

1) առաջարկություններ ներկայացնելու գորահավաքային նախապատրաստության և գորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

2) իրենց իրավասության սահմաններում խորհրդակցություններ հրավիրելու.

3) իրենց իրավասության սահմաններում համակարգելու գորահավաքային նախապատրաստության և գորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության հետ կապված միջոցառումները:

**III. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

8. Զորահավաքային մարմնի կառուցվածքը և կազմը որոշվում են՝ ելնելով զորահավաքային նախապատրաստության աշխատանքների բնույթից և ծավալից:

9. Զորահավաքային մարմնի ղեկավարը ենթարկվում է պետական մարմնի աշխատակազմի, համայնքի և կազմակերպության ղեկավարներին:

10. Զորահավաքային մարմինների գաղտնի գործավարությունն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2017թ.

N 169-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 344-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի N 110 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 344-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 1-ին կետի «451» և «383» թվերը փոխարինել «461» և «393» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2017թ.

N 172-Ն

ք.Ստեփանակերտ

ԽՍԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՁՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 06 բաժնի 3 խմբի 1 դասի «01. Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում» ծախսային ծրագրով նախատեսված խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների 2017 թվականի սուբսիդավորման առավելագույն չափերը՝ ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման մարմինների և դրանց ենթակա կազմակերպությունների՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ ֆինանսավորումն իրականացնել սույն որոշման հավելվածում նշված փակ բաժնետիրական ընկերությունների կողմից ներկայացված և լիազոր մարմինների կողմից հաստատված նախահաշիվների հիման վրա:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ սույն որոշման հավելվածի աղյուսակի 1.2 տողում նշված ֆինանսավորումն իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉՍՓԵՐԸ**

(հազար դրամ)

Հ/հ	ԼՂՀ պետական կառավարման մարմինների և ենթակա կազմակերպությունների անվանումները	Գումարը
1	<i>ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն</i>	170 000,0
1.1	«Ջրային տնտեսություն» ՓԲԸ	15 000,0
1.2	Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորում	155 000,0
2	<i>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</i>	240 000,0
2.1	«Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ	240 000,0
3	<i>Ստեփանակերտի քաղաքապետարան</i>	60 000,0
3.1	«Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ	60 000,0
4	<i>Շուշիի շրջանի վարչակազմ</i>	30 000,0
4.1	«Բարեկարգում» ՓԲԸ	30 000,0
5	<i>Քաշաթաղի շրջանի վարչակազմ</i>	300 000,0
5.1	«Քաշաթաղի ջրամատակարարում» ՓԲԸ	300 000,0
	Ընդամենը	800 000,0

ԼԵՌՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 306-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 306-Ն որոշմամբ սահմանված կարգում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) կարգի 2-րդ կետում՝

ա. երկրորդ նախադասությունում «վարկի» բառից հետո լրացնել «պայմանագրով նախատեսված» բառերը, իսկ «բնակելի տան» բառերից հետո՝ «սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով նախատեսված» բառերը,

բ. երկրորդ նախադասությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Ընդ որում, եկամտային հարկի գումարները վարձու աշխատողին և անհատ ձեռնարկատիրոջը ենթակա են վերադարձման միայն մեկ բնակարանի ձեռք բերմանը կամ մեկ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների դիմաց».

2) կարգի 4-րդ կետում «չափով» բառից հետո լրացնել «, բայց ոչ ավելի, քան տարեկան կտրվածքով 2 800 000 ՀՀ դրամը» բառերը, իսկ «հաշվետու եռամսյակի ամիսների համար ներկայացված եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում հաշվարկված եկամտային հարկի գումարը» բառերը փոխարինել «եկամտային հարկի (եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների) գծով հարկային պարտավորության գումարն ամբողջությամբ» բառերով.

3) կարգի 5-րդ կետում «դրույքաչափով» բառից հետո լրացնել «՝ բայց ոչ ավելի, քան եռամսյակային կտրվածքով 700 000 ՀՀ դրամը» բառերը.

4) կարգի 6-րդ կետի 9-րդ ենթակետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ ենթակետ.

«10) վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևի հայտարարություն՝ տվյալ բնակարանում (անհատական բնակելի տանը) փաստացի բնակվելու և բնակարանը (անհատական բնակելի տունը) կամ դրա որևէ մասը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված չլինելու, բացառությամբ մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ գտնվող անձանց վերաբերյալ:

Բնակարանը (անհատական բնակելի տունը) մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ գտնվող անձանց անհատույց օգտագործման հանձնված լինելու դեպքում՝ ներկայացվում է մերձավոր ազգակցական կապը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Սույն ենթակետում նշված հայտարարությունում ներառված տեղեկությունների հավաստիությունը պարզելու նպատակով հարկային մարմինը կարող է հարցում կատարել երրորդ անձանց և ստանալ տեղեկատվություն».

5) կարգի 7-րդ կետում «և 9-րդ ենթակետերով» բառերը փոխարինել « 9-րդ ենթակետերով և 10-րդ ենթակետի առաջին պարբերությամբ» բառերով.

6) կարգում 7.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.2-րդ կետ.

«7.2. Սույն կարգի 6-րդ կետի 10-րդ ենթակետում նշված հայտարարությունը վարկառուն առաջին անգամ ներկայացնում է բնակարանի ձեռքբերումից կամ անհատական բնակելի տան ավարտական ակտը և գույքի սեփականության (կամ գույքի նկատմամբ իրավունքի) պետական գրանցման վկայականը ստանալու հաշվետու ժամանակահատվածում:».

7) կարգի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Եկամտային հարկի վերադարձման մասին դիմումը մերժվում է, եթե այն ներկայացնելու պահին հարկային գործակալն ամբողջությամբ չի մարել եկամտային հարկի (եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների) գծով հարկային պարտավորությունը կամ անհատ ձեռնարկատերն ամբողջությամբ չի մարել եկամտային հարկի (եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների) գծով հարկային պարտավորությունը և (կամ), եթե չեն ներկայացվել սույն կարգի 6-8-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը և (կամ) ներկայացված փաստաթղթերով կամ երրորդ անձանցից ստացած տեղեկություններով պարզ է դարձել, որ հիփոթեքային վարկը փաստացի չի ուղղվել բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանը և (կամ) բնակարանի ձեռքբերումից կամ անհատական բնակելի տան ավարտական ակտը և գույքի սեփականության (կամ գույքի նկատմամբ իրավունքի) պետական գրանցման վկայականը ստանալու ամսաթվից սկսած՝ յուրաքանչյուր օրացուցային տարում վարկառուն առնվազն 183 օր փաստացի չի բնակվում տվյալ բնակարանում (անհատական բնակելի տանը) և (կամ) բնակարանը (անհատական բնակելի տունը) հանձնվել է վարձակալության կամ անհատույց օգտագործման, բացառությամբ մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ գտնվող անձանց: Եկամտային հարկի վերադարձման մասին դիմումը հարկային մարմնի կողմից մերժվելու դեպքում դիմումը ներկայացնելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում մերժման հիմքերի մասին ծանուցվում է վարկառուին:».

8) կարգի 10-րդ կետում «հինգ» բառը փոխարինել «տասը» բառով.

9) կարգի 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված դիմումում համավարկառուների կողմից վարկառուի բանկի անվանումը և հաշվի համարը նշված լինելու դեպքում վերադարձվող գումարը փոխանցելու համար գանձապետարան ներկայացվող վճարման հանձնարարականում նշվում են վարկառուի տվյալները:».

2. Այն համավարկառուները, որոնց համատեղ սեփականության իրավունքը նշված չէ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը հարկային մարմին ներկայացված գույքի սեփականության (կամ գույքի նկատմամբ իրավունքի) պետական գրանցման վկայականում, մինչև 2017 թվականի մարտի 31-ը հարկային մարմին են ներկայացնում համատեղ սեփականության իրավունքի նշումով գույքի սեփականության (կամ գույքի նկատմամբ իրավունքի) պետական գրանցման վկայականի պատճենը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մարտի 2017թ.

N 177-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Ա. Առաքելյան փողոցի թիվ 10/3 հասցեում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,8973 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ